

լինել Նեռն փոփոխակին՝ նախ քան Միհրի դիւանալը։ Բայ այսմ քրիստոնէութեան մուտքից առաջ էլ կարող են Միհրին ասած լինել նաեւ Նեռն. այս դէմքում Նեռնը դեռ կրակի բարի Աստուած է։ Հետագայում է, որ Նեռն ստանում է վաս իմաստ եւ նշանակում Դերաքրիստոն՝ նոյնանիշը դառնալով «Վաս Միհր» զաղափարին։ Գալով Միհր=Նեռն զուգագրութեան հնչա-ձեւաբանական հիմնաւորմանը՝ պէտք է աւելացնենք հետեւեալը։ Երբ մենք ըստ սովորութեան այն աշխատութիւնը նախազէս յանձնեցինք մեծայարդ չ. Ներսէս Վ. Ակինեանին, ապա նա ձեռագրիս հետ ծանօթանալուց յետոյ դիւեց, որ «Միհր-ան, Ամիր-ան ձեւերը մտածել կու տան Մեր-ան = Նեռ-ան = Ներ-ն = Նեռ-ն, ուստի ն (Նեռ-ն-ի ծայրն) ոչ այլ ինչ է, բայց եթէ ան՝ սկզբնական չեշտով սեղմուած, ինկած (Ներ-ան, Ներ-ն, Նեռ-ն)։»։ Արգոյ բանասէրի այս զուգագրութիւնն ուշագրաւ հնարաւորութիւն է, որ կարելի է փաստել նաեւ Ահրիման = Ահրման = Արհմն փոխակերպութեամբ։

Վերջում մնում է ասել, որ Հայ միհրապաշտութեանը նուիրուած այս աշխատութիւնը չէ քննում Հայ կրօնի պատմութեան իշշած վրջանները հասարակագիտական տեսակիտից։ Այս էլ արուած է դիտակցարար։ Գաղափարախօսական վերնաշնքի ու Հասարակական հիմնաշնքի երեւոյթները պատճառակցօրէն շաղկապելուց առաջ անհրաժեշտ է, որ առանձին-առանձին ձշուեն թէ գաղափարականութեան ու թէ հանրային կեցոյթի երեւոյթները։

Գրուածքիս ձեռնարկել ենք Հայ միհրապաշտութեան զաղափարային մի քանի երեւոյթները ճշտելու դիտումով միայն։ Հայ կրօնի պատմութեան ուսումնասիրութեան ներկայ վիճակում այլ կարգի աշխատութիւններ գենեւս հնարաւոր չեն։ Պէտք է սպասել, մինչեւ որ ճշուեն, երեւան բերուին եւ կապակցուին բազմաթիւ ուրիշ երեւոյթներ, այլ կարգի փաստեր էլ։

Մէերի զրոյցի բառերով ասենք՝ պէտք է ջանալով աչք տնկել՝ «չուրի գիտին խայիմնայ»։

(Վերջ.)

ԹԱՐԻ ԱԿԱԴԵՄԻՅԱՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ

## ՍԵՒՐԵՆԸՑ ՎԱՆ ՔԷ

(Շայունակութիւնն.՝)

## ՄԵՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

Հայ վանքի ու կրօնաւորի ունեցած գերը հայ ժողովրդի յառաջադիմութեան ինդում յատկանշական չափանիշ ընդունելով ԺԹ. դարում ուսուահայ հատուածի պատմութեան մէջ տեսնում ենք, որ մինչեւ այդ դարու սկիզբն եղած երկուսի փոխյարաբերութիւնը այլ եւս գոյութիւն չունի։

Ժի. եւ ԺԼ. դարում հայ կեանքին գոյն առողջ վանքն ու կրօնաւորն է դեռ. հաստրակական զարգացման գերիշխող տարրը կրօնաւորն է խոր զրական վաստակներով՝ իս վերածնութեան բուն աշխատանքով։ Խուսահայ այժմեան հատուածի այն ժամանակուայ բռնած տարածութեամբ անցնողը՝ հայ մշակոյթի աշխատանքը վանքերում եւ անապատներում էր տեսնում, հայ կրօնաւորն էր ժողովրդին ուղի ցոյց տուողը դէպի ինքնուրոյն աղդային ամփոփումը։

Անցէք ԺԹ. դարու վերջերում ուսուահայ հատուածով, յատկապէս Ժի.—ԺԼ. դարերի վերածնութեան կենդրոն Սիւնեաց աշխարհով՝ Գեղարքունիքով եւ կը տեսնէք որ այդ օջախները հանգել են եւ նրանցից մէկն է միայն գեռ առկայծում իւղը պականձ ճարագի նման, — այդ Սեւանն է։

Հայ կեանքի ուսուահայ հատուածի պարզացման յատկանիշն է այդ — Սեւանը, միակ մնացորդը կրօնական զարգացման այն մեծ շարժման, որ այնքան թափով սկսուեց Ժի. դարում եւ շարունակուեց շուրջ երկու դար։

Եթէ առաջ Հայ կրօնաւորն էր հոգեւոր զաստիարակը ժողովրդի ու նրան զրի սեւն ու սպիտակը հասկացնողը, Եթէ կրօնաւորը՝ առհասարակ հոգեւորականն էր իմաստութեան աղքիւրը, որին գիմում էին Հայ իշխանաւորն ու ոամիկը, ապա ԺԹ. դարում առնե առողջը ուսուահայ կեանքում այն աշխարհականն էր, որ առաջ աշխարհական էր, այժմ ուսուահայ կեանքում այս դեպքը



դիմում վայր են գտանում ԺԹ. դարսում կրօնաւորնի եւ աշխարհականի փոխյարաբերութիւնների տեսակէտից եւ վանքն ու կրօնաւորը այժմ գտանում են ուսանող փոխանակ ուսուցչի : Արտաքուստ ուսահայ եկեղեցին. բարեզպարզում, կարգ ու կանոնի տակ է մտնում եւ կարծես աւելի ոյժ է ստանում : Եղել են ու կան այժմ էլ պատմաբաններ, մտածողներ, որոնք ուսւ իշխանութեան հայ եկեղեցու նկատմամբ ցոյց առւած թեւարկութեանը, արտաքին փայլի էժանագին փառասիրութիւնը չոյզ սստիկանական պատիւների մէջ տեսել են հայ եկեղեցու հզօրացումը, կանոնաւորումը :

Յիրաւի երբ համեմատենք Հայոց հայրապետների վիճակը պարսից ու օմանցւոց տիրապետութեան ժամանակ Ռուսաց տիրապետութեան ժամանակի հետ, կը տեսնենք մեծ տարրերութիւն ու յօդուած վերջին շրջանին է խօսում եւ ի մնաս մահմետական տիրապետութեան:

Համեմատեցէք Արևիքութ կաթողիկոսին բանած ձգելու, աքցանով իր միաը պոկելով իրեն ուստեցնելու, Յակովիք կաթողիկոսի սուլթանի ոտքերը փողոցում համբուրելու վիճակը<sup>2</sup> մեր ԺԹ. դարու ոռւսահայ կաթողիկոսների Ոռւսաց կայսեր ներկայանալու պալատական սեթեւթեալ արարողութեան հետ; Կարգացէք այդ առթիւ եղած նկարագրութիւնները «Արարատ»ում եւ համեմատեցէք ու կը տեսնէք որ տարբերութիւնը խիստ մեծ է: Նախկին ուսյայի վիճակն ունեցող կաթողիկոսը՝ այժմ իշխանաց իշխանի արտաքին պատիւն ունի. ըրջապատռած է չքով ու արդուզարդով, որ աչքով ամէն ինչը պնահատով, տեսարանի գերի ժողովրդի համար մեծ արժէք ունի:

Սակայն այդ փայլը, պատասխան  
պճառանքն ու սեթեւեթանքը, ոստիկանական  
«պատրաստ ենք ծառայելու», «լուսմ  
ենք!» պատիւները հայ եկեղեցու բովանդա-  
կութեան ուժասպառ լինելու, հետզետէ  
բարոյական ուժերից ցամաքելու միջոցներ  
են եղել:

Եթէ մի կողմից ուսւ միազգային  
ապագայինացման նպաստող գործ դրած

միջոցներն էին պատճառ հայ անշուք պատերով, բայց կենդանի ոգով աղօթաբանների չքեղազարդ գմբեթներով, ոսկեպատ պատերով, պատկերներով, բայց ծննդայի նման բովանդակութիւն ստանալուն, ապա միւս կողմից հայ մտաւորականների Եւրոպայի ժը. զարու փիլիսոփայութեան, իրապաշտութեան, բնագիտական նուաճումների հետ՝ երկրորդ կամ երրորդ աղբիւրից աղճատուած ձեւով ծանօթանալի ու մեր ժողովրդի էլ լուսաւորելը, որ նշանակում էր նրանց լեզուով կրօնից՝ իրօք ուղակին ասել եկեղեցուց ազատագրելու անէջը պակաս դեր չէ խաղացել այդ դրութեան առաջ գալուն մէջ:

Հայ մարդն էլ հետզետէ տնտեսական ուժեղ պայքարների, հոսանքի խառնութեամ ու ուշադրութեան կենդրունը գրի, գրականութեան ոջախից հարստանալու, գրամագլուխի մէջ է տեղափոխում։ Հայ ունեւորը գրամագլուխ դիզելով է զբաղւում։

Անկասկած է, որ աշխարհիկ գրականութեանն էլ զեռ երկար ժամանակ հայ վանքի, Հոգեւորականի կողմնակի աջակցութեան չնորհիւ է զարգանում. աշխարհականն ու աշխարհայինն էլ հայ հոգեւորդպլրոցներից է սկիզբ առնում: Իրաւամբ ցայսօր զանդապում են մտքի զարգացման կողմնակիցները, որ հայ ունեւոր գասը անտարբեր է զեպի հայ մշակոյթը, մինչեռ թէ կուզ ժէ—ժէ. զարերում, էլ չեմ առնում թ. — ժ. զարերում հայ մշակոյթը հովանաւորութիւն է գտել հայ աղնուական շասի կողմից:

Այսպիսով մի կողմից ոռւսահայ հա-  
ռուսած ստեղծուիլը, ոռւսաց տիրապետու-  
թեան ձեռք առած միջոցները, միւս կող-  
մից մեր առհասարակ աշխարհիկանալու  
համար գործ զբած միջոցները, երրորդ  
կողմից օտարացման եւ օտարանալու հա-  
մար առաջ և կած Հրապոյրները, ոռւսահայ  
առուսածի և կեղեցիները են ածում պճուած  
առաջարի, առանց կենդանի ոգու, վանքերը  
և տղեատէ մարում են, անսապատները փլա-  
ւակի վերածում եւ զբանց մէջ մնում է  
իրակ վերջին վկան Գեղամայ ծիծղուն ծոռ-  
ակի վրայ թառած Սեւանայ երբեմնի ու-  
ռումնատենչ, այժմ հանգչող անսապատը.  
արձես կենդանի ապացոյց — օրինակը  
նալու մէից մինչեւ ՓԹ. դարու վերջը  
առաջուած պատմական մէծ յեղացրջման :

## Բ.

Պարսից տիրապետութեան տակ եղած հայ երկիրը ժէ—ժլ. դարում հետզհետէ թուրք-թաթար տարրով լցում է եւ հայաբնակ Արարատը եւ Սիւնիքը բաւականաչափ դատարկում են հայերից ու սրանց տեղ հիմնում են թրքարևակ գեւլեր:

Գեղարքունեաց աշխարհն եւս զերծ չէ մնում այդ ազգագրական նոր ողողումից: Սեւանայ լճի ափերը բռնում են թուրք-թաթարական բնակիչներ: — Գեղարքունեաց աշխարհի լուսաւորութեան օջախ վանքերն եւ անապատներն աւերտում են, ամայութեան ենթարկում. զերծ է մնում միայն Սեւանը, որը կզզու վրայ շինուած վինելով՝ շատ էլ մատչելի չէր աւագակարոյ թուրք տարրի յարձակումներին:

Հնաւանդ եկեղեցական կարգի համաձայն հոչակաւոր վանքերն՝ անապատներն հաշուում էին թեմերի կենդրոններ, որու շրջանի գիւղեր պատկանում էին այդ անապատին, որոնց տուրքերով պահւում էր անապատը, վանքը իր միաբանութեամբ: Այդպիսի թեմեր էին դեռ Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի ժամանակ Գեղարքունի-Հայրավանքը, Շողաղայ, Մաքինեաց վանքերը եւ Սեւանայ անապատը, որն ունէր 18 գիւղ ըստ Զամբուի<sup>3</sup>:

Սեւանայ թեմի գիւղերը ժթ. գարու սկզբում, Եփրեմ կաթողիկոսի օրոք էին Բարձապի, Բճնի, Քարավանսայ, Հոնդամալ, Բարաքիչի, Եայճի, Դղմաշէն, Ներքին Ախտայ, Վերին Ախտայ, Ծաղկոնք, Շահրիս, Վարսեր (Զըրչում), Գոմաձոր, Ճապոստիկ (այժմեան Զիբախլուն) եւ Պորտակ (այժմ Օրտակլու)<sup>4</sup> ընդ ամէնը 15 գիւղ:

Այս գիւղերի բնակիչների տուրքերով պահւում էր վանքը, սակայն բնակիչների թիւը քիչ էր, ուստի եւ Դանիէլ կաթողիկոսը 1802 թ. Հոկտ. 12ին կոնդակ է տալիս Սեւանայ Մարգիս վարդապետի անունով, որ գնայ ժողովարարութեան Երեւան եւ Վրաստան, Տփիխս, Սեւանայ սուրբ անապատը «չէն եւ հաստատուն» պահելու համար — «թէպէտ ժողովուրդքն հեռացեալ են այժմ յերկրէ եւ ի բնակութենէ իւրեանց, այլ յանապատն կայ շինութիւն եւ բնակու-

թիւն միաբանից. մի՞թէ ժողովուրդքն հեռանալով ի տեղուցէ իւրեանց, հոգոյ տունն եւս հեռանայ եւ անհետ լինի. մարմինն հեռաւորութիւն ընդունի, այլ եւ ոչ հոգին...<sup>5</sup>»:

Սեւանը թեմ էր, ունէր իր առաջնորդը, որը թէեւ վարդապետ էր եւ միաժամանակ վանահայր, բայց ըստ Եփրեմ կաթողիկոսի 1828 թ. Հոկտ. 26 եւ Յովհաննէս Ը. կաթողիկոսի 1832 թ. Նոյ. 2ի հրովարտակների «...Հրաման ունի... Դամենայն առաջնորդական պարտաւորութիւնս եւ զգործս պատկանեալս թեմիդ կատարել ամենայն բարեկարգութեամբ... եւ ստանալ ի ձէնջ յանուն Անապատին զամենայն հոգեւորական սահմանեալ նուէրս եւ դուռը ձեր, որք են պաղի, հոգերաժին, կողոպուտ, քահանայաթաղ, եւ այլք նուիրանի սովորականք...»<sup>6</sup>:

Հայ վանքը, անապատը պահողը եղել է ժողովուրդը իւր տուրքով, այդպէս էլ պահուում էր Սեւանը, իրը մի փոքրիկ թեմ. մինչեւ 1836 թիւը, երբ ուսւ իշխանութիւնը տալիս է հայ եկեղեցու կառավարութեան համար «Պոլոտէնիա»ն, որով Ռուսահայոց ժողովուրդը բաժանում է վեց թեմի թեմական իշխանութիւնների կենդրունները վանքերից, անապատներից տեղափոխելով քաղաքական բաշխումով գծուած նահանդի կամ շրջանի կենդրոնական քաղաքը: Հոգեւոր կենդրոնն անապատից քաղաք է տեղափոխուում. այս եկեղեցու աշխարհականացումն էր:

Սեւանայ անապատն ունէր եւ իւր սեփականութիւնները, գիւղերը, խանութները, ջրաղացները, սակայն եկամուտները շատ քիչ էին: Դժբախտաբար Սեւանայ մենաստանի գիւղնը առհասարակ անկանոն ու թերի է, մանաւանդ մինչեւ 50ական թուականները. ուստի Մեհաստանի, յատկապէս նրա տնտեսական դրութեան մասին որոշ տեղեկութիւններ հնար չեղաւ քաղել: 1832 թաւի եկամուտն է եղել 163 թուական, 2600 դիան, 1833ին 196 թուական, 5700 դիան, 1834ին 77 թուական, 1350 դիան,

<sup>5</sup> Գեղարքունի, 142:

<sup>6</sup> Գեղարքունի, 144—145:

<sup>7</sup> Սեւան անապատի գիւղնը, 1916 թ.ին կարգի է բերել Սեւանի միաբանը, այժմ հանգուցեալ Եղնիկ վ., որը ծայրէ ի ծայր աչքէ եմ անցրել 1918—1920 թ.ին, որից եւ քաղում եմ անապատի վերաբերալ տեղեկութիւնները; digitized by

1835ին 103 թուման, 1200 դիան: Եկամուտների տարբերութիւնը առաջ գալիս է նրանից, որ նուէրները, խաչահամբոյրները պատահական բնոյթ ունին եւ տարբեր են լինում նայելով ուխտաւորների թուին, տարւայ բերքին, ժողովրդի կացութեանը:

Դրամները դեռ պարսկական կիրառութեամբ են գանձւում, թէեւ ոուսաց տիրապետութիւնը սկսում էր արդէն չորս տարի առաջ:

1828 թ.ին ոուս-տաճկական պատերազմից յետոյ Գեղարքունիքը հայաշատ է դառնում չնորհիւ Ալաշկերտից, Հին Բայազիտից եկած գաղթականների, որոնք 1830 թուին բնակութիւն են հաստատում այժմեան Ն. Բայազիտում եւ շրջակայքում: Գիւղերի բնակիչների թիւը շատանալով աւելանում է եւ Սեւանայ մենաստանի եկամուտը, քանի որ մի կողմից ուխտաւորներն են շատանում, միւս կողմից հնաւանդ սովորութեամբ Ս. Նշանը մենաստանի Նուիրակ վարդապետը տանում է, գիւղացիների ցանկութեամբ, գիւղերը շրջեցնելու եւ բնութեան պատահարների, տարափոխիկ հիւանդութիւնների առաջն առնելու, եւ հաւաքում է նուէրներ յօդուա մենաստանի:

Ով տեսել է, թէկուզ ի. դարու սկըրում, թէ ի՞նչ հանդիսով, ի՞նչ ջերմ հաւատով, Գեղարքունեաց եւ Ծաղկաձորի շրջանի գիւղացիք գալիս են մենաստանը, վանահայրը ինդրում, Ս. Նշանը իրենց գիւղը տանելու, ի՞նչպէս մենաստանից թագիւղ տանելու, շարականով, մենաստանի հնչիւն պանդերի դօղանչիւնի տակ, լալով, արցունդով, ճանապարհ են դնում Ս. Նշանը գէպի քով ճանապարհ են դնում Ս. Նշանը գիւղի ծայրը գեղեր, ի՞նչպէս գիւղացիք խմբերով գիմաւորում են երբ Ս. Նշանը գիւղի ծայրը գիւղանում, հիւանդները անկողիններից իջնում են ու գիշերային գգեստներով գիմաւորում, կին, երեխայ, ծեր, մանուկ լարահառաչ միակ օգնութիւն իրենց ցաւի Ս. Նշանից սպասելով գիմաւորում են նրան — նա կը տեսնէ, որ մենաստանը շրջանի ժողովուրդի համար խիստ կարեւոր գեր է կատարել, մանաւանդ ժԹ. դարու առաջին կիսում:

Գիւղացին իւր տնտեսութեան որոշ մասը սիրով նուիրում է մենաստանին, քանի որ նրա կրօնական-բարոյական կեսն-

քում Գեղարքունեաց այդ չքնաղ անապատը կենդրոնական տեղ էր բռնում:

Կրօնական ըմբռնումը, կեանքի դժուարութիւնների յաղթահարելու ոյժը ներշրջելու, ցաւերի, վշտերի մխիթարանքն ստանալու աղբեւը էր գիւղացու համար. եւ անապատը այդ գերը կատարում էր աւելի խոշոր չափով ժԹ. դարու սկզբներում, երբ Հայ ժողովուրդն իր ամբողջութեամբ կրօնական - եկեղեցական գաստիարակութիւն ունէր:

Հայ ժողովուրդը պատմական ու աշխարհագրական պայմանների չնորհիւ մէկ կամ երեխմն երկու դար ուշ էր ապրում զարգացման այն շրջանը, որ քաղաքակրթական ժողովուրդներն էին ապրում: ԺԹ. դարու սկզբում Հայ ժողովուրդը եւ բոպական ժողովրդի վերածնութեան սկիզբն էր ապրում. նոր նրա երկիրը, յատկապէս ոուսահայ հատուածը, սկսել էր փակ տնտեսութիւնից, տնայնագործութիւնից ելնել ու կամաց կամաց անցնել մանր արդիւնաբերութեան շրջանը:

Նահապետական էր կենցազը, տնտեսութեան ձեւը ժԹ. դարու առաջին քառորդում: Ամէն ինչ գիւղացին իւր տունն էր պատրաստում, իւր ընտանիքի ոյժով, դրսից ներմուծող տնտեսական - արշիւնաբերական շատ քիչ էր ստանում: Քաղաքը ոուսահայ հատուածի մէջ մէկ հատ էր — երեւանը այն էլ ասիական քաղաք, որ մեծ գիւղից քիչ էր տարբերուում: Այսպիսի շրջանում ամէն ինչ տնայնագործական էր լայն մաքով, այնպէս, ինչպէս միջին դարում եւրոպայի ժողովրդի մէջ էր: Եւ ինչպէս վերջինումս ժողովրդի մտաւոր զարգացման զեկը վանքի, հոգեւորական ձեռքին էր, այնպէս էլ եւ մեզանում էր:

Կարդացէք Խ. Արովեանի Վէրք Հայաստանին ու կը տեսնէք, որ ժԹ. դարու սկզբի Այրարատի, ինչպէս եւ Սիւնիքի ժողովուրդը գեռ միջին դարու, թէեւ վերջին շրջանի, կեանքն է ապրում. «Աեծ մարդիքը միրքները սանգրելով, պառաւ կնանիքը չարսաւը կոնստանտիների տակին՝ կամաց կամաց տանից դուրս էլան ու Տէրողորմեայ քաշելով, Հայր մեր ասելով, Հրաժարիմքը կամ Հաւատով խոստովանիմքը քրիստոների տակին վնթիքնթացնելով, իրար ողջոյն տալով՝ շատը իր տակը քցելու չորը կամ մորթին ձեռին բռնած, քիթ

քթի տւած գնացին ժամ, դուռը պաշեցին, էն վախտին վրայ հասան, որ տէրտէրը դեռ չէր էկել, ժամկոչին ասեցին, որ զանգակը քաշի ու իրանը մի քանի ծունը դնելուց յետոյ, մարդիքը մեղանի առաջին, կամ սների տակին, կնանիքը եղի դասում իրանց համար իրար մօտ շորը փուեցին, չոքեցին, գլուխ գլախ դրին ու սկսեցին զրից անել...<sup>8</sup>»:

Այս էր հայ դիւղացու, կ'ասեմ հայ մարդու, որովհետեւ ոռւսահայն այդ ըշանում գիւղացի էր, քաղաքացի ներկայ մտքով գրեթէ չկար, հոգեւոր ու մտաւոր սնունդի պատկերը:

Նրա տնտեսութիւնը փակ տնտեսութիւն էր. «Գինին կարասներով շարած, ամբարը հացով լիքը, կթի կովն ու գոմէշները, Փորթ ու ձագը տակներին, գոմում կապած, քեահլան ձին թավլումը, դութանը դռանը՝ լծած, մառանը եմչով կախանով, տանձ ու խնձորով խլթլթում... կարասներով կողակ, կճճներով պանիր ու դալուրմայ, աքաշներով զոխ, բոխ, ողորմակոթ, բղզներով եղ ու կարագ, մոթաւներով պանիր, ծո՛վ, ի՛նչ առունելի պանիր, ծո՛վ, ի՛նչ առուն»:<sup>9</sup>

Այս էր նրա տնտեսութիւնը եւ նրա հասկացողութիւնը ոչ միայն ժԹ. դարու առաջին քառորդում, այլ նոյն իսկ 40ական թուերին նոյն դարու, որի նկարագիրը տալիս է անմահ հայրենասէր աշակերտը Պերճ Պոօշեան իր մի շարք՝ Հացի ինդիր «Կոււածաղիկ» Սօս եւ Վարդիթեր աշխատութիւններում:

Նոյն դրութիւնն ունէր համարե՛ա Գեղարքունեաց ժողովուրդը դեռ 70 ական թուերին եւս. քանի որ այս զաւառը իւր աշխարհագրական պայմաններով շատ էր կորած քաղաքակրթական կենդրոններից. Հաղորդակցութեան զիւրին միջոյներ ըլեկային. այս ըրջանի ժողովուրդը զանդադ է առաջ գնում զարգացման ուղիով, միշտ գրեթէ կէս դար եւ աւելի յետ մնալով հարեւան Երեւանի ըրջանից: Էլ չեմ առում Տփիսի ու Բագուի հայ ժողովրդից: Իր երկրի սրբավայր Սեւանի նման, աս էլ կղզիացած, կտրուած է աշխարհից եւ մի անապատ է մտքի զարգացման տեսակէտից ոռւսահայ հատուածում:

<sup>8</sup> Խ. Աբովեան, Վէրք Հայաստանի, Ա. Հար., էջ 12—14:

<sup>9</sup> Նոյն, էջ 27—28:

Համեմատեցէք Սարդիս Փիլոյեանի նոր Բայազիացու (որը 1895 թ. Սեւանի միաբան դարձաւ ու վանահայր եւ մնաց այդ պաշտօնում մինչեւ 1912 թ.) «Կորած մարգարիտ» վէպիկի նկարագրութեան հետ և. Արովեանի նկարագրութիւնը եւ կը տեսնէք, որ 50 տարի յետոյ էլ Գեղարքունեաց ըրջանի ժողովուրդն այն մտաւոր տնտեսական վիճակն ունէր, ինչ որ կար ժԹ. դարու առաջին քառորդում Երեւանի եւ ըրջապատի ժողովրդի մէջ: Նոյն խունկ ու մոմի, նոյն տէր ողորմափ, Ս. Նշանի ուխտ գնալուս ցաւից ազատելու համար ճակատի ոսկիքը կտրելու եւ նուիրելու, կուլտուրան է իշխողը: Կրօնական-վանական դաստիարակութեան կնիքն է, որը Սեւանայ անապատի չնորհիւ դեռ պահւում էր ժողովրդի մէջ:

Այս աղդեցութիւնը, այս գաստիարակութիւնը կարող էր տալ Սեւանայ անապատը, քանի որ ժամանակի տնտեսական մտաւորական ըմբռումը հայ ժողովրդի մէջ իր աւանդական կողմից չէր դուրս եկել:

Եւ յիրաւի ժԹ. դարու առաջի քառորդում եւ մինչեւ 50ական թուականները Սեւանը ինքն էլ փակ տնտեսութիւն ունէր. նա էլ մի օջախ էր, իր վարուցանով, կով ու ոչխար պահելով, նա հայ նահապետական մի մեծ գերգաստան էր, որի նահապետը վանահայրն էր: Սնապատական կեանքը մարելու տիսուր, առկայժող ըրջանն էր ապրում: Նրա մէջ այս ըրջանում չկար այլ եւս ԺԷ—ԺԲ. դարու կենդանի ուսուցման, գրասիրութեան ողին, բայց կար անհաստական առաքինութեան ողի: Ճգնազեցաց կեանքի կեանք, որը սակայն միարանութեան ընդհանուր ողին ու գոյնը չէր. ինչպէս առաջ էր, այլ այս ու այն անհատ մենակեցի, ճգնաւորի, որը եւ իրը առկայժող պատրոյդ աղօտ լոյն էր սփոռում մարող անապատի իսաւարում: Հասարակական կենցաղի զարգացման հետեւում էր անապատը. Հասարակական կեանքը ելնում էր վակ տնտեսութիւնից եւ սկսում քաղաքային տնտեսութիւնը. մտաւոր շարժումը թէւ դեռ հոգեւորականի հսկողութեան տակ, աշխարհիկ տարրին էր անցնում. Անապատն էլ անապատինը թողնելով վանքի էր վրածուում:

Այդ ըրջանի Սեւանայ մենաստանի կեն-

ցաղն են նկարագրում անապատ եկած, այն-  
տեղ ապրած երկու հոգեւորականներ՝ Զա-  
քարիա Եպի. Գուլասպեան - Բէհըռուդեան,  
որը Երեւանի առաջնորդ էր 1825 թ. և ապա  
Մանուկ Վ. Կիւմուշխանցի, որը 1828—1830  
թ. էջմիածնի Սինոդի կողմից դալիս է  
Սեւան վանքը կանոնաւորելու:

Կիւմուշխանցի նկարագրելով 30 ական  
թուականների Սեւանայ անապատի միա-  
րաններին, որոնք թուով 20 են հաշում,  
ամէն մէկին տալիս է կրօնաւորի վայելով  
մի ածական. օր, մէկն է «աղաւնաբարոյ»,  
հլու եւ հաղատակ նախազահի, արի, աղօ-  
թասէր եւ ընթերցանէր». միւաը «քաղցրա-  
տեսիլ, բարեհամբոյը, ճգնասէր... ի մարդ-  
կային կազմուրանաց տկարագոյն, բայց  
չոգուոյ եռանդիւն արի, զգաստ եւ սրբա-  
սէր». մի երրորդը «այր համեստ, աղօթա-  
սէր, ընթերցող, ծահօթ քերականութեան,  
ճարտասանութեան եւ թուարանութեան,  
ժամասաց, անդաղար սաղմոսերգու». մի  
չորրորդը (Կարապետ մահեսի կոյր) «իմանալի լուսով զարդարեալ բազում ա-  
ռաքինական մասոմբք, զաղմոսն ըոլոր եւ  
զժամերգութիւնն շարականօք անդիր իրը  
անսխալ բերան մշտամոռնչերգու առ Աս-  
տուած...<sup>10</sup>»:

Այս առաքինական վարքն էր իշխում  
ընդհանրապէս միարանութեան մէջ. բայց  
եւ կայլին ճգնազգեաց անձինք, որոնք ա-  
ռաւել եւս խստակրօն էին: Այսպիսիներից  
էր Մելքոն ճգնաւորը, որը 1851 թուին է  
վախճանուել եւ թաղուել մենաստանում:  
Աս «վարէր զճգնաւորական կեանս զամե-  
նայն ժամանակս կենաց պահելով եւ ճաշա-  
կելով զչորաբեկ հաց եւ ջուր ... նաեւ զցայդ  
եւ զցերեկ առաւել պարապէր ի մշակական  
աշխատութիւնս՝<sup>11</sup>: Նոյնպիսի սրբակրօն  
ճգնաւորներ են եղել նաեւ Ռափայէլ, Միհ-  
թար եւ Մակար վարդապետները, որոնց  
մասին Կիւմուշխանցին խօսում է հիաց-  
մունքով, որովհետեւ դրանք «սրբութեամբ  
հեղութեամբ եւ իմաստութեամբ փայլէին»:  
Դրանցից Ռափայէլ Վ. Ծ իւր ամբովզ կեան-  
դրանցից Ռափայէլ Վ. Ծ իւր ամբովզ կեան-  
դրանցից Ռափայէլ Վ. Ծ իւր ամբովզ կեան-

դրուում. Մակար Վ. Ծ իւր եղել է «Անապատի  
դարդը<sup>12</sup>»:

Անապատի տնտեսական բոլոր գործերը  
կատարում են միարանները՝ հաց թիւել,  
վայր կոտրել, կով կթել, աթար պատրաս-  
տել, լասար (նաև չկար գեռ եւս) վարել,  
մի խօսքով ո՛չ մի ծառայող դրսի մարդ  
չկար: Մանուկ Վ. Կիւմուշխանցին միայն  
կոխում է այդ կարգը. վարձելով չորս աշ-  
խարհիկ նաւաստիներ, ինքն ասում է, որ  
վանքի մշակական բոլոր ծառայութիւնները  
իրենք միարաններն էին կատարում ան-  
խտիր, թէ՛ վարդապետները, արեղանները  
եւ թէ՛ մահատեսիները (աշխարհիկ առանց  
կրօնաւորական աստիճանի միարաններ<sup>13</sup>):  
Մենաստանի միարանութեան կենցաղն հա-  
մապատասխան էր իրենց վարք ու բարքին:  
Զաքարիա արքեպ. Գուլասպեանի նկարա-  
գրութեամբ նրանք բարի, հեղ եւ խոնարհ  
էին. եթէ մէկը միւսին վշտացնում էր,  
ձեռքը համբուրում էր, մեղայ ասում, թո-  
ղութիւն գտնում:

Օրը միանգամ էին կերակուր ուտում,  
որ լինում էր լորուց, ոսպից կամ այլ ընդ-  
եղէններից պատրաստուած. դրեթէ ողջ  
արքին պաս են պահում, բաց ի շաբաթ եւ  
կիրակի օրերից, երբ նաւակատեաց կերա-  
կուր են ուտում. կայլին մարդիկ, որոնք  
տաք կերակուր չէին ուտում. կայլին ուրիշ-  
ները, որ հինգ օր ծոմ էին մնում. իրենց  
սենեակներում կրակ չէին անում, հազնում  
էին խարազն (քուրչ) բոլորը, վանահօրից  
սկսած մինչեւ մահատեսին: Վանահայրը ա-  
ռանց միարանների գիտութեան իւր համար  
առանձին կերակուր չէր պատրաստում: Մե-  
փականութիւնն չոնքին ամէն ինչ հասրա-  
կաց էր<sup>14</sup>:

Խցերը հասարակ քարից ու հողից էին  
պատրաստուած, շատ նեղ են ու փոքր,  
որոնց մէջ հազիւ մի մարդու մահիճ կարող  
էր տեղաւորուիլ. Խցերը խոնաւ էին: Ճրագի  
ծուխն էլ լցում էր մէջը եւ միարաններին  
նեղում: Այս խցերի փոխարէն համեմատա-  
րար նորը շինուում է 1834—1835 թուերին  
Յովհաննէս Վ. Ծ վանահայրութեան օրով  
եկեղեցու արեւմտեան կողմը<sup>15</sup>:

<sup>12</sup> Մանրամասնութիւնները տես Կիւմուշխանցի,  
71, 72:

<sup>13</sup> Անդ, եր. 82—83:

<sup>14</sup> Շահաբաթունեան, Սառըադր. Բ, 230—232 եր.,

216 եր.:

<sup>15</sup> Անդ:

<sup>10</sup> Կիւմուշխանցի, եր. 87—90:

<sup>11</sup> Կիւմուշխանցի, եր. 44:

Այժմեան այցելուն էլ կարող է տեսնել կղզու վերին մասում, Առաքելոց եւ Ս. Կարապետ վանքերի առաջ, հին խցերի փլատակները, նեղիկ լուսանցքով, հաղիւ երկու մարդատեղ ունեցող, հասարակ քարաշն խցերի մնացորդներ եւ աւերակներ. խցեր, որոնք որոշ պատկեր են տալիս ԺԹ. դարու մենակեացների կենցաղի:

Նկատենք եւ այն, որ միաբանները առաջներում ապրել են կղզու վերի մասում՝ գագաթին. այժմեան աւերակ խցերի մօտ. ԺԹ. դարու առաջին քառորդից եկել են կղզու վարի մասը՝ հարթավայրը՝ այժմեան տեղը:

Անապատականի կենցաղը օրինակելի քրիստոնէական պիտի լինէր. բնականարար նրանց անմիջական պարտքը՝ աղօթքը նոյնպէս պիտի լինէր օրինակելի: Մեր վանքերը վարուել են շարունակ Ս. Բարսղի կանոններով, արտաքին կենցաղի տեսակետից. իսկ ժամակարգութիւնը եղել է տարրեր սովորական ժամակարգութիւնից, իւրաքանչիւր վանք ինքը աշխատել է յարմարուելով ընդհանուր կանոնին, իր առանձնայատուկ կողմն էլ ցուցագրել:

Անապատականի կենցաղի մէկ մասը աղօթքին պիտի նուիրուէր. աղօթք, որ անմիջականներքին հոգեկան մաքրութեան, վերածնութեան պիտի նպաստէր եւ աղօթք, որ լինում էր ժողովրդի, աշխարհի յանցաւոների, մեղաւոների, վշտացեալների, կարօտեալների, հիւանդների համար: Դրանով պիտի բացատրել եւ այն, որ ժողովրդը իրենց հոգու փրկութեան համար մենաստանին նուիրում են անառնեղէն, դրամ, ցորեն, գարի, այլ եւ զանազան շնչեր, այգի, ջրաղաց, խանութ:

Անապատի աղօթքը միշտ գերադասուել է սովորական աղօթքից. անապատը իւր արտակարգ պայմանների չնորհիւ յատուկ ուշադրութեան է արժանացել ու սուրբ տեղի համբաւ է ունեցել:

Ահա այդ ժամանակուայ աղօթքի նկարքիրը: Գիշերուայ կէսին զանգը հնչում է եւ բոլորը զալիս են նեղեցիք. նախ ասում են մէկ կանոն սաղմոս, ապա գիշերային ժամերգութիւնը մինչեւ «Զքէն զոհանամք» աղօթքը ապա երկու կանոն սաղմոս են ասում կանոնապլիսի հետ, ապա մնացեալ ժամերգութիւնը անընդհատ Արեւադալի ժամերգութիւնն էլ կից. ապա զնում են իրենց

իցերը առանձնական աղօթք անելու: Այս տեւում է մօտ  $2-2\frac{1}{2}$  ժամ, գիշերուայ ժամի երկութից մինչեւ  $4-4\frac{1}{2}$  ըլ: Յետոյ գալիս են ձաշու ժամն են ասում երեք Ռուրմեանները, մէծի պահոց քարոզներով եւ աղօթքներով. ապա զնում են ձաշելու. ուր որ միաբաններից մէկը վարք սրբոցից մի բան է կարգում, միւսները լուռ ձաշում են: Մի քանի ժամից յետոյ սկսում են Երեկոյեան ժամերգութիւնը, սկսելով «Ի նեղութեան» կանոն սաղմոսից: Սրանից մի քիչ յետոյ Հանգստեան ժամերգութիւնն են ասում՝ «Եկեսցէ»ն եւ ապա զնում են ննջելու: Մեծի պահոց օրերին քիչ ժամանակ են մնում դուրսը, օրուայ մեծագոյն մասը անց են կացնում եկեղեցում: Տարուայ մէջ տասը հակում են կատարում. ամբողջ գիշերը ժամերգութիւն կատարելով. ապա միւս օրը լինում է պարապալ<sup>16</sup>:

Համեմատելով այդ ժամանակուայ ժողովրդի մտաւոր բարոյական աշխարհէացքը Սեւանի անապատի միաբանների կենցաղի, վարքի, բարքի հետ տեսնում ենք, որ մէկը միւսին համապատասխան է, մէկը միւսին աղբիւը եւ միմեանց լրացնող:

Կրօնական ոգին իշխում է, ջերմեռանդ բարեպաշտական զգացմունքը դործունէութեան դրդիչն է. աղօթքելը նպատակ է. առասարակ անապատականը դրաւիչ է գեր: Սեւանը դրսում գտնում է համապատասխան տրամադրութիւն իւր կենցաղի համար. դուրսը իւր ձգտմանը, իւր ըմբռնածին, ցանկութեանը ներդաշնակող կրօնաւոր է տեսնում Սեւանի անապատում:

Այս ըջանի վանահայրերն են, ըստ Մեսրոպ արքեպ. Սմբատեանի. 1. Սարգիս վ. Ուկանապատցի 1801 թուից. 2. Ռափիայէլ վ. այր սրբակեց 1818. 3. Յովհաննէս վ. Հաջաջուր գիւղից 1819 թ. 4. Մեհաս վ. Ճաթղուանցի 1840 թ. եւ 5. Յովհաննէս վ. Անտօնեան 1842<sup>17</sup>: Ըստ Կիւմուշխանցու վանահայրներն եղել են. 1. Գրիգոր վ. Գանձակեցի 1723—1815. 2. Սարգիս վ. Սեւանցի 1807—1818. 3. Յովհաննէս վ. Հաջաջուրցի 1818ից<sup>18</sup>: Հաւանական վերջի ցուցակն է: Սոքա իրենց դործունէութեամբ ու կենցաղով նոյնն են եղել, ինչ որ միւս միաբանները, աչքի

<sup>16</sup> Շահմաթունի, Բ. Հար., 229—230:

<sup>17</sup> Գեղարքունի, 134 եր.


<sup>18</sup> Կիւմուշխանցի, 66—70 եր.

ինկնող երեւոյթն եղել է այն, որ տնտեսութիւնը համեմատաբար աւելի ընդարձակել էն եւ միաբանութեան նոր խցեր շինել<sup>19</sup>: Այս շրջանի վանահայրերը եղել են պատմական Սեւանի անապատական աւանդութիւնների վերջին ներկայացուցիչները. որոնցից յետոյ անապատը վանքի կենցաղ սոէսկում, պահելով քիչ բան անապատի սուրութիւններից:

Սեւան սկսում է իւր կենցաղի մի այլ շրջան 50ական թուերից:

ԳՐԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՒ

(Շարունակելի):



## ՃԱՆՈԹԱԿՐՈՒԹԻՒՆՔ ՍՅԱՋՊՈԼՈՅ ՊԵՏՄՈՒԹԵԵՆ ԵՐԵՄԻՍ ՉԵԼԵՊԻԻ ՔԷՍՄԻՐՃԵԱՆ

Գ. Լ. Ո Ւ Խ. Զ.

(Շարունակութիւն):

Կարեւոր եւ ազգօգուտ ընկերութիւններու ալ ժամադրավայրը եղած է Ս. Լուսաւորիչ եկեղեցին իր յարակից շենքերով:

1860ին կազմուած է Հոն Անձնուէր ընկերութիւնը, որուն նպատակն էր՝ պանդուխտ կարգալ-գրել սորվեցնել: Այս ազգայիններու կարգալ-գրել սորվեցնել: Այս ընկերութիւնը որ բաւական տարիներ մեծ փուլածանութեամբ յարատեւած է, մինչեւ սկզբան կանաչապան թաղերու եւ նաեւ գախուկ սկզբան մեջ ալ ճիւղեր հաստատելով, դադասոններու մեջ ալ ճիւղեր հաստատարարով<sup>1</sup>. բայց բած է վերջ ի վերջ գժրախտաբարից<sup>2</sup>. բայց նպատակին գործադրութիւնը բնան. չէ կասած շնորհիւ անոր բարեղան հիմնադիր-անդամներէն Քրիստոնուր Ղաղաքանին: Այս պատուական կերպով, առանց որ եւ է շահու կամ փոխարիշ վերժն ալ 20—25 տարի շարունակ անփհատ կերպով, առանց որ եւ է շահու կամ փոխարիշ վերժն անութեան, մին մինակը յարատեւած է, եւ ամէն կիրակի Ղաղաքից եկեղեցոյն կից շենքի մը մեջ վանեցի, մշեցի եւ այլ հայ պանդուխոններու մը բաղմանթիւն մը իր գլուխը ժողվելով, մեծ չոծ բաղմանթիւն մը առանձիւն 109—111 լր.<sup>3</sup>

<sup>19</sup> Կիւմուշեանցի, 109—111 լր.  
<sup>1</sup> Ժամանակ, ս. Պոլոց 1863, թիւ 111:

եռանդով ուսուցած է անոնց հայերէն կարդալ-գրել, եւ այս՝ հակառակ իւր յառաջացած տարիքին 75 ձմեռներուն, ինչպէս տեսած եմ անձաւը:

1862ին հաստատուած է այն տեղ Վարժապետական ընկերութիւնը<sup>4</sup>, նպատակ ունենալով՝ Ազգ. վարժարաններու մէջ ուսուցման եղանակը բարեփոխել եւ վարժապետներու տևոր վիճակին բարովմանը հոգածու ըլլալ. սակայն երկու ելեք տարի հազիւ կեանք ունեցած է այն, առանց կարեւոր ձեռնարկի մը մայր ըլլալու:

1876 նոյեմբեր 1ին խումբ մը Ռւսումնական երիտասարդներու ջանքով հաստատուած է Հայ-Գրական ընկերութիւնը, որուն նպատակն էր՝ նպաստել ազգ զրականութեան զարգացման եւ գիտութեանց ծաւալման, զրագիտաց եւ գիտնականաց երկերը տպելով, եւ զրական, գիտական, պատմական Հանդէս մը հրատարակելով<sup>5</sup>. իր այս բարձր ու գեղեցիկ նպատակին մէջ չէ յաջողած այս ընկերութիւններու շարք մը, որոնք տեղի կունենային կիրակի օրերը Կալամից դպրոցին մէջ: Դէպի 1878ի վերջերը բոլորովն դադրած է այն:

1877 մարտ 9ին հաստատուած է Հոն Ազգային Մատենադարանի Ընկերութիւնը, որ նպատակ ունէր հիմնել՝ Ազգ. Ո աստենադարանու թանգարան, եւ նոխացունել զանոնք, բանասիրական եւ հնագիտական հետազոտութիւններ ընել եւ հրատարակել ի տեղիկութիւն<sup>6</sup>:

1877—1880 եւ 1881 խիստ փայլուն գործունէութիւնով ապրած է այս ընկերութիւնը. հիմնած է այն Ազգ. Մատենադարանը՝ կից կերպարական վարժարանին եւ Հոն ժողոված է բազմաթիւ հայ Զեռագիտներու եւ հայ ու օտար տպագրութիւններու ձոփ հաւաքածոյ մը, ինչպէս նաև հին զրամներ ու հնագիտական հետա-

<sup>1</sup> Ժամանակ, ս. Պոլոց 1862, 1 յունվարի, եւ Կիւմուշ:

<sup>2</sup> Պոլոց 1863, թիւ 3:

<sup>3</sup> Կանոնագիտների Հայ բարեկան ընկերութեան, ս. Պոլոց

1877, ապ. 6. Ա. Պանուիկան, էջ 6:

<sup>4</sup> Կանոնագիտների Ազգ. Մատենադարանի ընկերութեան:

թիւն, ս. Պոլոց 1878 ապ. Արամեան, էջ 5:

<sup>5</sup> Վահագիտական հետազոտութիւն կամ Վահագիտական հետազոտութիւն:

<sup>6</sup> Վահագիտական հետազոտութիւն կամ Վահագիտական հետազոտութիւն: